

Տ. ՎԱՐԴԱՆ ԱՔԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՂԱՏԱՐԱԳԻՆ

(8 փետրվարի 2004 թ.)

«... զի որ հասարայ՝ ընդունի
զկեանսն յախրենակսնս»:
(Նովի. Զ 47)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի հավաքացյալ ժողովուրդ, քիչ առաջ այս սուրբ խորանից Հովհաննու Ավետարանից հնչած սույն բողոքը մեր մարքի սլաքն ուղղում են մեր՝ առ Զրիսպոստն ունեցած հավաքը և հնարավորություն ընձեռում մեզ, որպես քրիստոնյա, էլ ավելի լրջորեն խորհելու այս խոսքերի շուրջ՝ այն պարզ պատճառով, որ քրիստոնեական ճանապարհն սկսվում է հավաքով:

Հավաքով ոչ միայն սկզբնավորվում է հոգևոր կյանքը, այլև հավաքով են պայմանավորված հոգևոր կյանքի ողջ ընթացքը, նրա վերելքն ու զարգացումը: Հավաքը զաղափարական համոզմունք կամ Աստծո գոյության փաստի ստակ ընդունումը չէ, այլ մարդուն պրկված ամենապարզական կարողությունն ու պարզելը՝ իր Արարչի հետ հաղորդակցություն հաստատելու համար, որի հավաստումը տեսնում ենք Հին և Նոր Կտակարանների պարմության մեջ:

Միրելիներ, Աստծո ընտրյալ աշխարհի համար հավաքը եղել է հոգևոր կյանքի և սրբության առաջնային գործոն, մեծագույն արդարություն, ներքին ուխտ Աստծո հետ, աստվածսիրության գրավական, հզոր պաշտպանություն, աստվածային սքանչելիքների կատարման նախապայման, աստվածությունության շնորհ և այլն:

Իր հավաքի համար էր, որ Ենովքը, առանց մահ տեսնելու, երկինք փոխադրվեց: Իր հավաքի շնորհիվ էր, որ Նոյը երկյուղածությամբ անսաց Աստծուց ստացած իր հրահանգին՝ գալիք և դեռ անտեսանելի բաների մասին, և փապանը պատրաստվելով՝ իր ընտանիքը փրկեց: Նոյն Աստծուն հավատարմով իր ժամանակի աշխարհը դադարապարեց և ժառանգեց հավաքից եկող արդարությունը: Իր հավաքով էր, որ Աբրահամը հնազանդվեց Աստծո կոչին, որպեսզի ելնի ու գնա այն տեղը, որն իբրև ժառանգություն պիտի ստանար, և նույն հավաքին հետևելով Աբրահամը ճամփա ելավ՝ առանց իմանալու, թե ուր է գնում:

Հավաքով էր, որ պանդուխտի պես ապրեց այն օտար երկրի մեջ, որն Աստված խոստումով իրեն էր տվել: Իսահակը նույն հավաքով սիրելի եղավ և օրհնեց Հակոբին ու Եսալին: Հավաքով էր, որ Հովսեփն իր վախճանման պահին հիշեց Իսրայելի ժողովրդի՝ Եգիպտոսից ելնելու խոստումը, և խնդրեց, որպեսզի իր աճյունը նույնպես փոխադրեն այնտեղ: Մովսեսն իր հավաքով սքանչելի գործություններ գործեց, իր հավաքով օձ դար-

ձած գավազանի փասը հարվածներով սպանեց եգիպտացիներին, հավաքով ճեղքեց-բաժանեց ծովը և իր ժողովրդին անցկացրեց, հավաքով փայտը գցեց դառնահամ աղբյուրի մեջ, և ջուրը քաղցրացավ: Հավաքով մանանա իջեցրեց՝ իր ժողովրդին լիացնելու, նույն հավաքով փարածեց իր բազուկները և հաղթեց Ամադեկին:

Հավաքի միջոցով Աստծո ողորմությանն արժանանալու շար ու շար օրինակներ կան նաև Նոր Կտակարանում: Մեր Երկնավոր Տերն Իր երկրավոր քարոզության ընթացքում բազմիցս մեծարեց ու դրվարեց հավաքը՝ որպես մարդու հոգևոր կյանքի էական հարկանիշ: Միևեկի հավաքացյալներ, եթե ուշադիր կարդանք Նոր Կտակարանը, ապա կտեսնենք, որ Տիրոջ կողմից կապարված հրաշագործ բժշկությունները զուգորդված են Իրեն մոլեցողների հավաքով:

Հավաքով մարդը մասնակից է դառնում աստվածային գործերին, որ անճառելի են և վեր մեր մարքից ու իմացումից, և ոչ միայն այս. հավաքով կարելի է խնդրել և ստանալ ամեն բան և նույնիսկ գործել այն, ինչ հնարավոր չէ մարդկային բնությանը, քանզի ինչպես մեր Տերն է ասում «Եթե հավաքաբ և չերկմտեք, չկա այնպիսի բան, որ չկարողանաք անել» (Հմմտ. Մարկ. ԺԱ 23): Հավաքը մուտք է դեպի երկնքի արքայություն և հոգևոր բարիքներ, հավաքով է տեղի ունենում մարդու ներքին վերափոխման հրաշքը:

Քրիստոսի հանդեպ ունեցած հավաքի շնորհիվ էր, որ կույրի աչքերը բացվեցին, Հիսուսին մոլեցած մարդու նույն հավաքի գործությամբ իր հիվանդ ողորդ բժշկվեց, ժողովրդապետի դուստրը Քրիստոսի հանդեպ ունեցած նույն հավաքով հարություն առավ, նույն հավաքով բժշկվեց տեղափոխված կինը, Քրիստոսի բարեկամ Մարթայի հավաքի շնորհիվ էր, որ Մեր Տերը հարություն փվեց նրա եղբորը՝ ջրաօրյա մեռած Ղազարոսին:

Պետրոսն իր հավաքի համար վեմ անվանվեց և նույն հավաքի շնորհիվ կարողացավ քայլել ծովի վրայով, սակայն երբ երկմտեց, սկսեց ընկղմվել ջրերի մեջ:

Սակայն ի՞նչ է հավաքը իր այս խորունկ ու անպարփակելի իմաստի մեջ:

Հավաքը վերստին ծնունդ է առնում «նոր մարդու», ով սիրով ինքն իրեն, խաչանման արվեստով, ընծայում է կամավոր ինքնաբերական այն ճշմարտություններին, զաղափարներին և արժեքներին, որոնք խաչով չեն խաչվում և հողով չեն թաղվում:

Միևեկի հավաքացյալներ, հոգևորի հետ հաղորդակցություն հաստատելը մարդկային հոգու որոշակի կարողությունն ու օժիվածությունն է, որը գործում է աստվածային լուսավորության պայմաններում: Ինչպես մարմնավոր տեսողությունը գործում է զգայական լույսի ներգործությամբ, այնպես էլ հոգևոր տեսողությունը գործում է Աստծո շնորհական լույսի հետ միավորվելով: Մարդկային հոգու՝ Աստծո հետ հաղորդակցության մեջ մտնելու այս շնորհական կարողությունը կոչվում է հավաք:

Ներկաբար, սիրելիներ, հավաքը մեր մարքի ու փրամաբանության արգասիքը չէ, կյանքի փորձառությունից քաղված եզրակացություն չէ, զգացական ներթափանցում կամ մարքի թոփսք չէ, այլ Աստծուց տրված շնորհ, նույն Աստծուն ճանաչելու և հետևելու համար, ուստի հավաքալ իր կրոնական իմաստի մեջ՝ նշանակում է վստահել այն բոլոր հայտնություններին, որոնք տրված են Աստծուց, և որոնք ըմբռնում ենք իբրև բացարձակ և անժխտելի ճշմարտություն: Այս իմաստով հավաքը կյանք է, քրիստոնյայի պարագային՝ մարդու ապրելու միակ ձևը:

Հավաքքի այս միակ ձևով ապրեցին մեր նախնիները և մեր երկիրը գերծ պահեցին երևելի ու աներևույթ բոլոր թշնամիներից: Նույնիսկ ավելին, մեր նախնիներն այդ հավաքքի ձևը պահեցին մանավանդ մեր պարամության ամենից փխուր, հուսահապեցուցիչ, խավարամած շրջաններում, հեթանոսության խավարը փարապելով Լուսավորչի՝ Արագածի կապարին վառած լույս կանթեղի գործությամբ, խափանելով օտարացման արհավիրաց վրանգը Օշականի ամենասուրբ գերեզմանի սրբազնասուրբ, այբբենաստեղծ ու գրագյուտ վարդապետի ոսկեղենիկ լեզվով ու գրի անժանգելի պայծառությամբ և իր հաղթանակած բարձունքում մնացած և հազկերպյան սպառնալիքը խորտակած Կարմիր Վարդանի սրով:

Միրելիներ, այսուհետ առավել մոտենանք հավաքքին, քանի որ այսպիսի բազում գործություններ ունի այն: Հավաքքը Եղիային երկինք բարձրացրեց, հավաքքով հաղթվեց ջրհեղեղը, հավաքքով ամուլները զավակներ ծնեցին, փրկվեցին սրից, ազադվեցին կապանքներից, ելան գրից, աղքատները բարձրացան, հալածվողները փրկվեցին, բաժանեցին ծովը, վնճը պարտեցին, ծարավներին ջուր տվեցին, քաղցածներին հագեցրին, մեռյալներին կենդանացրին, ալիքները կանգնեցրին, հիվանդներին բժշկեցին, հաղթեցին գործություններին, պարիսպները կործանեցին, առյուծների բերանը փակեցին, կրակը մարեցին, ամբարտապաններին խոնարհեցրին, խոնարհներին փառքի ու պարվի հասցրին, այս բոլոր գործությունները հավաքքով գործվեցին:

Միրելի հավաքավոր ժողովուրդ, եկեք, ուրեմն, անասան պահենք Քրիստոսի հավաքքը մեզանում և մեր գործերով այն թարգմանելի դարձնենք ու հավեր հիշենք երկնքում մայր և երկրում հայր չունեցող մեր Տեր Հիսուս Քրիստոսի կենարար խոսքերը. «...զի որ հաւաքայ՝ ընդունի զկեանսն յաիտենականս» (Նովհ. Զ 47):

«Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեւսնս. ամէն»: